ՄՄԿ Մեկնաբանություն 25

Շահութահարկեր. փոփոխություններ կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակում

Հղումներ

- «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1 (2007 թվականի վերանայված տարբերակ)
- «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» ՀՀՄՍ 8
- «Շահութահարկեր» ՀՀՄՍ 12

Խնդիրներ

1. Կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխությունը կարող է հետևանքներ ունենալ կազմակերպության համար՝ ավելացնելով կամ պակասեցնելով նրա հարկային պարտավորությունները կամ ակտիվները: Սա կարող է պատահել, օրինակ, կազմակերպության բաժնային գործիքների բորսայական գնանշման գրանցման կամ կազմակերպության սեփական կապիտալի վերակազմակերպման ժամանակ: Սա կարող է նաև պատահել այն ժամանակ, երբ վերահսկող բաժնետերը տեղափոխվում է արտասահմանյան երկիր: Այդպիսի իրադարձության արդյունքում կազմակերպությունը կարող է հարկվել այլ կերպ. այն կարող է, օրինակ, շահել կամ կորցնել հարկային արտոնություններ կամ հետագայում ենթակա լինել հարկման այլ դրույքաչափերի:
2. Կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխությունը կարող է անմիջական ազդեցություն ունենալ կազմակերպության ընթացիկ հարկային պարտավորությունների կամ ակտիվների վրա: Փոփոխությունը կարող է նաև ավելացնել կամ պակասեցնել կազմակերպության կողմից ճանաչված հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները՝ կախված այն բանից, թե հարկային կարգավիճակի փոփոխությունն ինչ ազդեցություն կունենա կազմակերպության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի փոխհատուցման կամ մարման արդյունքում առաջացող հարկային հետևանքների վրա:
3. Խնդիրը այն է, թե կազմակեպությունն ինչպես պետք է հաշվառի իր կամ իր բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխության արդյունքում առաջացած հարկային հետևանքները:

Փոխհամաձայնություն

4. Կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակի փոփոխությունը չի հանգեցնում շահույթից կամ վնասից դուրս ճանաչված գումարների ավելացմանը կամ պակասեցմանը: Հարկային կարգավիճակի փոփոխության ընթացիկ և հետաձգված հարկի գծով հետևանքները պետք է ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, եթե միայն այդ հետևանքները չեն վերաբերում այն գործարքներին ու իրադարձություններին, որոնք հանգեցնում են, տվյալ կամ մեկ այլ ժամանակաշրջանում, սեփական կապիտալի ճանաչված գումարի կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարի ուղղակիորեն նվազեցման կամ ավելացման: Այն հարկային հետևանքները, որոնք վերաբերում են, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, սեփական կապիտալի ճանաչված գումարի փոփոխություններին (որոնք չեն ներառվում շահույթում կամ վնասում), պետք է ուղղակիորեն նվազեցվեն սեփական կապիտալից կամ ավելացվեն դրան: Այն հարկային հետևանքները, որոնք վերաբերում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված գումարներին, պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ

Փոխհամաձայնության ամսաթիվը

1999 թվականի օգոստոս

Ուժի մեջ մտնելը

Սույն փոխհամաձայնությունը ուժի մեջ է մտնում 2000 թվականի հուլիսի 15-ին: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ին համաձայն:

ՀՀՄՍ 1-ով (2007 թվականին վերանայված տարբերակ) փոփոխվել են ՖՀՄՍ-ներում օգտագործվող տերմինները: Բացի այդ, լրացումներ են կատարվել 4-րդ պարագրաֆում: Կազմակերպությունը պետք է այդ փոփոխությունները կիրառի 2009 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Եթե կազմակերպությունը ՀՀՄՍ 1-ը (2007 թվականին վերանայված տարբերակ) կիրառում է ավելի վաղ ժամանակաշրջանի համար, ապա փոփոխությունները պետք է կիրառվեն այդ ավելի վաղ ժամանակաշրջանի համար:

© IFRS Foundation/ՖՀՄՍ Հիմնադրամ